ԱՐՔԱՆԵՐԸ ՊԱՏԱՇԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ ՉԵՆ ԱՆՈՒՄ

Հայաստանի ազգային պատկերասրահում բացվել է գեղանկարիչ, պրոֆեսոր, Գեղարվեստի ինստիտուտի ռեկտոր Արամ Իսաբեկյանի անհատական աշխատանքների ցուցահանդեսը: Ցուցադրվում են վերջին տարիների աշխատանքները, հիմնականում առաջին անգամ՝ գեղանկար, գրաֆիկա: Հալեպ, Կահիրե, Փարիզ, Տորոնտո, Նյու Յորք, Լոս Անջելես, Լոնդոն. այսպիսին է նրա աշխատանքների ցուցահանդեսների աշխարհագրության ոչ լրիվ ցանկը՝ ցայսօր: Սակայն ցուցահանդեսը սոսկ առիթ էր զրուցելու արվեստագետի հետ՝ ոչ այնքան «ցուցահանդեսային» թեմաների շուրջ: Տոհմական նկարիչ Արամ ԻՍԱԲԵԿՅԱՆԸ շատ ասելիք ունի արվեստի, մշակույթի հանդեպ տարբեր մոտեցումների եւ մեզանում, ցավոք, խոր արմատներ ծգած բազմաթիվ պրոբլեմների մասին:

-Այո, երեւի թե «տոհմական նկարիչ» արտահայտությունը հենց ինձ համար է ասված: Ոչ միայն ծնողներս, այլեւ ազգականներս նկարիչներ, արվեստագետներ են: Այնպես որ, նկարելու ձիրքն ինձ մայրական կաթի հետ է փոխանցվել: Նկարել սկսել եմ ավելի վաղ, քան գրել-կարդալ սովորելը: Հայրս Էդուարդ Իսաբեկյանն է իգդիրցի նկարիչ, որ նաեւ խոր գրական հակումներ ունի. նրա «Իգդիր» գիրքն, իմ կարծիքով, պրոֆեսիոնալ գրչով է գրված: Մայրս նկարչուհի Արփենիկ Նալբանդյանն է Վահան Տերյանի ազգականուհին, հորեղբայրս ճարտարապետ Հրայր Իսաբեկյանն է, մորեղբայրս՝ Դմիտրի Նալբանդյանը...

- Վերջինս, թերեւս, մեր ժողովրդի կողմից միանգամայն ոչ միանշանակ ընկալվեց: Մի կողմ թողնելով պրոֆեսիոնալ մակարդակը, լենինյան եւ բրեժնեւյան շարքերը նրա դեմ որոշակի վերաբերմունք ձեւավորեցին:

- Սա բարդ, վիճելի հարց է: Եթե այսօր ինձ պատվիրեին Ռոբերտ Քոչարյանի դիմանկարը ստեղծել, մեծ սիրով այդ աշխատանքը կանեի եւ, կարծում եմ, որեւէ նկարչից ոչ վատ: Ու դրանից չէր հետեւի, որ ես նրան հաճոյանալ եմ ուզում կամ էլ թե «պալատական», «նոմենկլատուրային» նկարիչ եմ դարձել: Ամեն ինչ իր տեղն ունի:

Գոյան եւ Վելասկեսն էլ պալատական նկարիչներ են եղել, արքաներին ու նրանց ընտանիքներին նկարել: Մոցարտն էլ պալատական երաժիշտ էր: Նրանք բոլորն էլ իրենց ժամանակների լավագույններն են եղել, բոլորն էլ անկրկնելի, հանճարեղ: Արքաները երբեք պատահական ընտրություն չեն անում...

Դմիտրի Նալբանդյանին իր մոտ հրավիրեց ճապոնիայի վարչապետ Նակասոնեն, նույնն արեց Ինդիրա Գանդին, շատ այլ պետական, քաղաքական գործիչներ: Եվ նրանք Բրեժնեւի հանդիպումը «արքայակ

ները» չէին: Այստեղ արմատներն ավելի խորն են: Դմիտրի Նալբանդյանի հանդեպ վերաբերմունք սկսեց դեռ մինչեւ նրա Մոսկվա գալը. անձնական հարցեր էլ կային: Իսկ երբ Մոսկվայում սկսեց իր քաղաքական դիմանկարների հայտնի շարքերը, այստեղից միտումնավոր արշավ սկսվեց նրա դեմ:

- Այսինքն, ուզում եք ասել՝ շարժիչ ուժը նախա՞նձն էր:

- Անշուշտ: Համոզված եմ նրան «բրեժնեյան հակումներում» քննադատողներն իրենք էլ մեծ սիրով Բրեժնեւին կնկարեին, եթե նման պատվի արժանանային: Եվ հետո, նա միայն Բրեժնեւին ու Լենինին չի նկարել. 2000-ից ավելի կտավներ ունի՝ չքնաղ բնանկարներ, արվեստի լուրջ գործեր: Ապրելով Մոսկվայում՝ շատ հայ արվեստագետների է սատարել, ուզում էր իր ողջ ժառանգությունը, ստեղծագործությունները կտակել Հայաստանին, իսկ այստեղից նույնիսկ նրա թանգարանը բացելու առաջարկ էլ չարեցին:

Ընդհանրապես մեզանում մշակույթի, արվեստագետի հանդեպ վերաբերմունքը բացառիկ է: Դա է հենց պատճառը, որ, այսօր ունենալով այդպիսի ազգային ավանդույթներ եւ ներուժ հայտնվել ենք ներկայիս տխուր վիճակում:

- Ձեր խոսքերում արդեն զգացնել տվեց ոչ միայն Իսաբեկյան նկարիչը, այլ բուհի ռեկտորը՝ իր ադմինիստրատիվ «ոչ մշակութային» պրոբլեմներով:

- Բանն այն է, որ մեր Գեղարվեստի ինստիտուտը ուղղակի բուհ չէ, այն ուսումնական հաստատության եւ մշակութային օջախի մի յուրովի համադրություն է: Եվ իր ներկայիս անմխիթար վիճակով հենց վերջին խոսքերիս ապացույցն է: Դեռ 1945թ. խորհրդային իշխանությունը մեզ մի անշուք շինություն տրամադրեց: Իսկ այսօր, մեր այս գերդժվար ժամանակներում, եկ ու կիսավեր շինությունը ոտքի կանգնեցրու, պետությունից էլ դժվար է լուրջ օժանդակություն ակնկալել: Փոխարենը, տեսնենք, թե դեռ այն ժամանակներից ի՞նչ շենքեր էին տրամադրվել Ռիգայի, Վիլնյուսի, Թբիլիսիի գեղարվեստի ինստիտուտներին ու ակադեմիաներին՝ իսկական պալատներ: Սանկտ Պետերբուրգի գեղարվեստի ակադեմիան իշխան Մենշիկովի ապարանքում են հիմնադրել:

Սա դեռ միայն պրոբլեմի «ճարտարապետական» կողմն է: Շատ ավելի մտահոգող է առ արվեստը, մասնավորապես՝ գեղանկարչությանն ունեցած համընդհանուր մոտեցումը: Համոզված եմ, որ եթե, օրինակ, Բաժբեուկ-Մելիքյանը ֆրանսիացի լիներ, համաշխարհային ճանաչում կունենար: Եվ այստեղ որոշիչը փոքր ազգի գործոնը չէ



(կաս միայն դա չէ), այլ նման մեծությունների հանդեպ ունեցած մոտեցումը: Նույն Ֆրանսիայից օրինակ բերեմ: Մեկ տարի առաջ Փարիզում առիթ ունեցա լսելու նախագահ Շիրակի ելույթը, եւ գիտե՞ք, թե ինչպես սկսեց իր խոսքը. «Ես հպարտ եմ, որ նախագահն եմ մի ժողովրդի, որն աշխարհին տվել է Դելակրուայի պես նկարիչ, Լուվրի պես թանգարան, Հյուգոյի պես գրող...» ու շարունակում է թվել, սակայն ինձ գրավեց հատկապես այն, որ առաջինը Դելակրուայի անունն է նշվում: Փարիզցի իմ մի ծանոթ հայ նկարիչ՝ Արշակ Գառնին, տեղափոխվում է Հոլանդիա՝ այստեղ մշտական բնակություն հաստատելու: Եվ էլի՝ մոտեցման հարց է. Հոլանդիայում ապրող յուրաքանչյուր նկարչի, որն օժանդակության կարիք է զգում, պետությունը ամսական 1200 դոլար նպաստ է տալիս՝ «ոտքի կանգնելու համար»:

Վան Գոգի ու Ռեմբրանդտի օրինակը հոլանդացիների համար ուշացումով, բայց լուրջ դաս է եղել:

Համեմատություններիս հետ կարող եք չհամաձայնել, ասել, թե «մենք ո՞ւր, Հոլանդիան ու Ֆրանսիան ուր»: Սակայն ինձ ցավ պատճառողն այն է, որ մեր ավանդույթներով, ներուժով, առանձին տաղանդավոր անհատներով, նույնիսկ դասավանդման մեթոդիկայով նրանց չենք զիջում: Եվ այդքանից հետո այսօր մեր միջեւ այսպիսի անդունդ է, ու դեռ համեմատվելու իրավունք էլ չունենա՞նք:

- Ըստ Ձեզ, ի՞նչն է հանգեցնում այդ անդունդի առաջացմանը:

- Հիմքում պետական մակարդակով արվեստը եւ հատկապես՝ գեղանկարչությունը, «մոռացության» մատնելն է, այդ բարձիթողի, անտարբերության մթնոլորտ ստեղծելը: Շատ ու շատ քաղաքակիրթ երկրներում (նույն Ֆրանսիայում՝ օրինակ), եթե որեւէ անհատ-ձեռներեց կամ ընկերություն հովանավորում է արվեստի այս կամ այն ճյուղը, մեծապես ազատվում է պետական հարկերից: Տեսեք, թե շահագրգռելու ի՞նչ լավ ձեւեր են գտել: Մեզ մոտ, չգիտես ինչու, հակառակն է: Եթե մեկը հանկարծ «սխալվի» ու, ասենք, մեր բուհին մի որեւիցե նվիրատվություն անի, ինչ-որ անտրամաբանական հարկեր կպահանջեն: Գիտե՞ք, թե որքան եմ դիմել տեղի ձեռներեցներին, սփյուռքահայությանը (դե, իսկ պետությանը անիմաստ է դիմել): Թե պիտի հովանավորեն, մեր բուհից ավելի համապատասխան էլ ո՞ւմ են գտնելու: Բայց իրավիճակն այնպիսին է, որ պետությունն ինքը ոչնչով չաջակցելով՝ անբարենպաստ մթնոլորտ է ստեղծում անհատների ու կազմակերպությունների համար:

Եվ դա այն դեպքում, երբ այսօր համագործակցման փայլուն հնարավորություններ ունենք մեր մի շարք գործընկերների հետ: Վենետիկի Արվեստի ակադեմիան ակտիվ կապի մեջ է մեզ հետ, անչափ շահագրգռված է համագործակցելու. ի վերջո, Մխիթարյան միաբանությունն իրենց կողքին է, եւ մեր արվեստին քաջ ծանոթ են: Բեռլինի արվեստի բարձրագույն դպրոցի հետ մի որոշ ժամանակ ակտիվ կապի մեջ էինք, հետո մարեց: Մեր հնարավորություններով ի՞նչ առաջարկենք նրանց: Երբ նախաձեռնությունը, առաջարկությունները միշտ միակողմանի են, նման կապը երկար տեւել չի կարող:

Հաջորդ տարի լրանում է Մխիթարյան միաբանության 300-ամյակը: Այնտեղ պատրաստվում են այս հոբելյանը մեծ շուքով նշել: Հայաստանում էլ պետք է դա նշեն կառավարական մակարդակով: Այստեղ պետք է գիտակցեն, թե մեզ համար ինչ անգնահատելի ու անփոխարինելի արժեք է Մխիթարյան միաբանությունը. մի փոքրիկ Հայաստան՝ Եվրոպայի կենտրոնում: Պետք է, որ հասկանան...

Զրուցեց
Լեւոն ԳԵՎՈՐԳՅԱՆԸ

Հ.Գ. «Նորաթերթի» ոչ պաշտոնական աղբյուրների համաձայն՝ ՀՀ նախագահը, բարձրաստիճան այլ պաշտոնյաներ իրենց օտարերկրյա հյուրերին եւ արտասահմանյան այցերի ժամանակ նվիրում են հայ գեղանկարիչների աշխատանքներ, որոնց ձեռքբերման գումարները առնվազն մեկ տարվա արժանապատիվ կեցության հնարավորություն կարող էին տալ շուրջ երեսուն նկարչի: